## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, (0322)68781, lernapat.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2015թվականի N 24-Ա

### ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածով, ՀՀ կառավարության 23.10.2000թ. թիվ 656 որոշման դրույթներով

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է՝
Հաստատել Լեռնապատ գյուղի Հողային հաշվեկշիռը 01.07.2015թ. դրությամբ համաձայն 22 և 22ա ձևի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱԶՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, (0322)68781, lernapat.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2015թվականի N 25-Ա

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների և հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 27.04.2015թ., թիվ 48/18 դրական եզրակացությունը,

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ԼՄ Լեռնապատ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողերից, 0.01 հա 0141-0035 ծածկագրի բնակավայրի նշանակության այլ հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով թվային հեռուստակայան կառուցելու համար:
2. Առաջարկել համայնքի ղեկավար Ս. Աբազյանին ապահովել իրավունքների պետական գրանցումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱԶՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԺԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ